Գաբրիել Գարսիա Մարկես

Ես միայն զանգահարելու եմ եկել

Գարնանային մի անձրևոտ երեկո, վարձած մեքենայով մեն-մենակ Բարսելոն գնալիս, Մարիա դե լա Լուս Սերվանտեսը Մոնեգրոների ամայի մի վայրում ավտովթարի ենթարկվեց:Նա քսանյոթ տարեկան գեղեցիկ և լուրջ մեքսիկուհի էր, տարիներ առաջ հայտնի անուն էր ունեցել որպես վարյետեի դերասանուհի, ամուսնացած էր սալոնային մի աճպարարի հետ, որի հետ պետք է հանդիպեր այդ օրը՝ Սարագոսայում որոշ ազգականների այցելելուց հետո: Մեկ ժամ տեղատարափ անձրևի տակ արագ սլացող ավտոմեքենաներին և բեռնատարներին հուսահատ նշաններ անելուց հետո, մի կիսաքանդ ավտոբուսի վարորդ խղճաց նրան, սակայն նախազգուշարեց, որ շատ հեռու չի գնալու:– Դե լավ, ոչինչ, – ասաց Մարիան, – ինձ միայն հեռախոս է պետք:Այդպես էլ կար. նրան միայն հեռախոս էր պետք, որպեսզի զգուշացներ ամուսնուն, որ ժամը յոթից շուտ տեղ չէր կարող հասնել: Ուսանողական վերնազգեստով և ծովափնյա կոշիկներով նա մինչև ոսկորները թրջված թռչունի տեսք ուներ և այնքան շփոթված էր պատահարից, որ մոռացավ հետը վերցնել ավտոմեքենայի բանալիները: Վարորդի մոտ նստած զինվորականի տեսքով, բայց մեղմ շարժուձևով կինը նրան սրբիչ ու ծածկոց տվեց և տեղ բացեց իր կողքին: Կիսով չափ չորանալով՝ Մարիան նստեց, փաթաթվեց ծածկոցով և փորձեց ծխախոտ վառել, բայց լուցկին թրջված էր: Կողքին նստած կինը նրան կրակ մատուցեց և մի քանի չոր մնացած գլանակներից մեկը խնդրեց: Ծխելիս Մարիան չդիմացավ զգացմունքներին ազատություն տալու ցանկությանը, և նրա ձայնն անձրևից ու ավտոբուսի թխկթխկոցից ավելի բարձր հնչեց: Կինը ցուցամատը շուրթերին դնելով ընդհատեց նրան:– Բոլորը քնած են, –շշուկով ասաց նա:Մարիան ուսի վրայով նայեց և տեսավ, որ ամբողջ ավտոբուսը զբաղեցված է անորոշ տարիքի և տարբեր բնույթի կանանցով, որոնք քնած են՝ փաթաթված իր ծածկոցի նման ծածկոցներով: Նրանց հանդարտությամբ վարակված՝ Մարիան կծկվեց նստատեղի մեջ և հանձնվեց անձրևի աղմուկին: Երբ արթնացավ, արդեն մութ էր, տեղատարափ անձրևը փոխվել էր պաղ շաղի: Նա գաղափար չուներ, թե որքան ժամանակ էր քնել և թե աշխարհի որ ծայրում էին գտնվում: Նրա հարևանուհին սթափ տեսք ուներ:–Որտե՞ղ ենք, – հարցրեց Մարիան:– Հասել ենք, – պատասխանեց կինը:Այդ պահին ավտոբուսը մտնում էր հսկայական, մռայլ մի շենքի սալահատակ բակը, որը անտառի մեջ գտնվող վիթխարի ծառերով շրջապատված հին մենաստան էր հիշեցնում:Բակում եղած միակ լապտերով հազիվ լուսավորված՝ ուղևորներն անշարժ մնացին այնքան, մինչև

զինվորականի նման կինը նրանց կարգադրեց իջնել՝ այնպիսի պարզունակ հրամաններ տալով, ինչպիսիք տալիս են տարրական դասարաններում: Բոլորն էլ հասուն կանայք էին: Նրանք բակի կիսախավարում այնպիսի զգուշությամբ էին շարժվում, որ կարծես երազային պատկերներ լինեին: Մարիան, որ վերջինն իջավ, կարծեց, թե նրանք միանձնուհիներ են: Բայց արդեն այդպես չմտածեց, երբ տեսավ, որ մի քանի համազգեստավոր կանայք նրանց դիմավորեցին ավտոբուսի դռան մոտ, գլխներին ծածկոց գցեցին, որպեսզի չթրջվեն և առանց խոսքի, ռիթմիկ և կտրուկ ծափերով նրանց ղեկավարելով, մեկը մյուսի ետևից շարք կանգնեցրին: Ավտոբուսի հարևանուհուն հրաժեշտ տալիս՝ Մարիան ցանկացավ վերադարձնել ծածկոցը, բայց նա ասաց, որ բակն անցնելիս՝ ինքը դրանով ծածկեր գլուխը և վերադարձներ մուտքի դռան մոտ:– Այստեղ հեռախոս կլինի՞, –հարցրեց նրան Մարիան:– Դե, իհա՛րկե, – պատասխանեց կինը, – այնտեղ Ձեզ ցույց կտան:Նա ևս մի գլանակ խնդրեց: Մարիան թրջված տուփի մնացորդը տվեց նրան:– Ճանապարհին կչորանան, – ասաց նա և գրեթե գոռաց ետևից, – հաջողությու՛ն:Ավտոբուսը պոկվեց տեղից՝ ժամանակ չտալով նրան այլ բան ասելու:Մարիան սկսեց վազել դեպի շենքի մուտքը: Մի հսկիչ կին եռանդուն ծափով փորձեց կանգնեցնել նրան, սակայն ստիպված եղավ տիրական ձայնով գոռալ. ՝Կա՛ց, քեզ ասում եմ՝: Մարիան նայեց ծածկոցի տակից և տեսավ մի զույգ պաղ աչքեր և առարկություն չընդունող մի ցուցամատ, որը շարքը մատնացույց արեց: Նա հնազանդվեց: Բայց արդեն շենքի նախասրահում առանձնացավ խմբից և դռնապանին հարցրեց, թե որտեղ հեռախո՞ս կա: Հսկիչներից մեկը, նրա մեջքին թփթփացնելով և մեղմ ձայնով ասելով՝ ՝Այստեղ, գեղեցկուհի, այստեղ հեռախոս կա՝, – նրան ստիպեց շարք վերադառնալ:Մյուս կանանց հետ Մարիան առաջ շարժվեց մի մռայլ միջանցքով, վերջում մտավ մի ընդհանուր ննջարան, որտեղ հսկիչ կանայք հավաքեցին ծածկոցները և սկսեցին բաժանել մահճակալները: Մյուսներից տարբերվող մի կին, որ Մարիային թվաց, թե ավելի մարդկային է և ավելի բարձր պաշտոն է զբաղեցնում, անցավ շարքի միջով՝ համեմատելով իր ցուցակն այն անունների հետ, որոնք գրված էին նոր ժամանածների կրծկալներին կարված ստվարաթղթին: Երբ հասավ Մարիային, զարմացավ, որ նա չուներ անձը հաստատող այդ ստվարաթղթից:– Բանն այն է, որ ես միայն զանգահարելու եմ եկել, – ասաց նրան Մարիան:Նա վրա տալով բացատրեց, որ ավտոմեքենան փչացել էր ճանապարհին, որ ամուսինն աճպարար է և սպասում է իրեն Բարսելոնում, որ իրենք մինչև կեսգիշեր երեք ներկայացում ունեն տալու, և ինքն ուզում է զգուշացնել ամուսնուն, որ ժամանակին չի կարող տեղ հասնել և նրա հետ գնալ, որ ժամը յոթն է մոտենում, իսկ ամուսինը տասը րոպե հետո պետք է դուրս գա տնից, և ինքը վախենում է, որ իր ուշացման պատճառով չեղյալ հայտարարվեն բոլոր պայմանավորված

ներկայացումները: Թվում էր, թե հսկիչ կինն ուշադիր լսում է նրան:–Անունդ ի՞նչ է, – հարցրեց նա:Թեթևացած շունչ քաշելով՝ Մարիան ասաց անունը, բայց նույնիսկ մի քանի անգամ ցուցակն աչքի անցկացնելուց հետո՝ կինը չգտավ այն: Անհանգստացած՝ մեկ այլ հսկիչի հարցրեց նրա անունը, իսկ վերջինս անխոս թոթվեց ուսերը:– Բանն այն է, որ ես միայն զանգահարելու եմ եկել, – կրկնեց Մարիան:– Շատ լավ, սիրունիկս, – ասաց պաշտոնավոր կինը, իրական համարվելու համար՝ խիստ ընդգծված քնքշությամբ նրան դեպի մահճակալը տանելով: – Եթե քեզ լավ պահես, կարող ես խոսել ում հետ կամենաս, բայց ո՛չ հիմա, վաղը:Հանկարծ Մարիայի ուղեղում մի միտք առկայծեց, և նա գլխի ընկավ, թե ինչու էին ավտոբուսի կանայք այնպես շարժվում, կարծես ակվարիումի մեջ լողալիս լինեին. նրանց թմրեցրել էին ցավազրկող դեղամիջոցներով, և այն քարե հաստ պարիսպներով և սառած աստիճաններով խավարի մեջ թաղված պալատն իրականում մտավոր խանգարում ունեցող կանանց բուժարան էր: Նա սարսափած դուրս փախավ ննջասենյակից, բայց դռանը չհասած, մեխանիկի լայն տաբատ հագած մի հաղթանդամ հսկիչ թաթի մի հարվածով բռնեց նրան և փականք բացելու կեռիկով հատակին գամեց: Սարսափից կաթվածահար՝ Մարիան վերից վար նայեց նրան:– Աստծու սիրուն, – բարբառեց նա, – մորս շիրիմով եմ երդվում, որ ես միայն զանգահարելու եմ եկել:Սակայն միայն կնոջ դեմքը տեսնելը բավական էր հասկանալու համար, որ այդ տաբատավոր դիվահարին, որին իր արտասովոր ուժի պատճառով Հերկուլինա էին կոչում, անհնար է որևէ բան խնդրել: Նա էր զբաղվում բարդ դեպքերով, և բուժարանում փակված արդեն երկու կանայք էին մահացել՝ խեղդվելով նրա սպիտակ արջի թաթեր հիշեցնող բազուկների մեջ, որոնք հմտացել էին ՝պատահաբար՛ սպանելու արվեստում: Առաջին դեպքում գործը փակվել էր՝ ապացուցվելով, որ դժբախտ պատահար է տեղի ունեցել: Երկրորդն ավելի խրթին դեպք էր. Հերկուլինային նկատողություն էր արվել և նախազգուշացվել, որ հաջորդ անգամ մանրազնին քննության կենթարկվի: Իսկ ամենապարզունակ վարկածն այն էր, որ այդ հայտնի անուն ունեցող ընտանիքի մոլորյալ գառնուկը Իսպանիայի տարբեր հոգեբուժարաններում կասկածելի դժբախտ պատահարների հեղինակի մշուշապատ անցյալ ուներ:Որպեսզի առաջին գիշերը Մարիան կարողանար քնել, ստիպված էին նրան քնաբեր ներարկել: Լուսաբացից առաջ, երբ նա արթնացավ ծխելու ցանկությունից, զգաց, որ արմունկներից ու կոճերից կապկպված է մահճակալի ճաղերին: Ոչ ոք չարձագանքեց նրա աղաղակներին: Առավոտյան, նույն ժամին, երբ Բարսելոնում ամուսինը կայանատեղում մեքենան կանգնեցնելու հուսահատ փորձեր էր անում, հարկ եղավ Մարիային բուժկետ տանել, որովհետև նրան գտել էին ուշաթափ, սեփական պետքերի ճահճի մեջ կորած:Երբ ուշքի եկավ, չիմացավ, թե որքան ժամանակ էր անցել, բայց աշխարհն անվրդով սիրո ծով թվաց

նրան: Նրա մահճակալի դիմաց հանդարտ ժպիտով, արջի քայլվածքով մի պատկառելի ծերուկ էր կանգնած: Ծերուկը մի քանի խորամանկ հնարքով ետ վերադարձրեց նրան ապրելու երջանկությունը: Բուժարանի գլխավոր բժիշկն էր նա:Մարիան ոչինչ չասաց, նույնիսկ չբարևեց, այլ միայն ծխախոտ խնդրեց: Ծերուկը մի վառած սիգարեթ մեկնեց և գրեթե լիքը տուփը նվիրեց նրան: Մարիան չկարողացավ հեծկլտոցը զսպել:– Հիմա օգտվիր առիթից, լաց եղիր, ինչքան սիրտդ ուզի, – թմրաբեր ձայնով ասաց բժիշկը, – արցունքներից ավելի լավ միջոց չկա:Մարիան առանց քաշվելու սիրտն այնպես թեթևացրեց, ինչպես երբեք չէր հաջողվել թեթևանալ իր պատահական սիրեկանների մոտ, սեր անելուց հետո իրեն համակած թախծի պահերին: Մինչ աղջիկը լսում էր, բժիշկը մատներով սանրում էր նրա մազերը, ուղղում էր բարձը, որպեսզի նա ավելի լավ շնչեր, առաջնորդում էր նրան իր տարակույսների լաբիրինթոսում այնպիսի իմաստնությամբ ու մեղմությամբ, որ նա երբևէ չէր երազել անգամ: Առաջին անգամ էր նրա կյանքում պատահում այս հրաշքը՝ մի տղամարդ ամբողջ հոգով լսում էր նրան ու հասկանում՝ առանց սպասելու, որ փոխարենը պետք է պառկեր իր հետ: Մեկ ժամ տևած երկարուձիգ զրույցից հետո թեթևացած սրտով՝ նա ամուսնուն զանգահարելու թույլտվություն խնդրեց:Իր պաշտոնական դիրքին հատուկ վեհությամբ բժիշկը վեր կացավ տեղից: Դեռ ո՞չ, թագուհի՞, – ասաց նա՝ Մարիայի այտին թփթփացնելով այնպիսի գորովանքով, որ նա երբևէ չէր զգացել, –Ամեն բան՝ իր ժամանակին: Դռան մոտից եպիսկոպոսի նման օրհնեց նրան և Վստահի՞ր ինձ՝ ասելով՝ անհեյտացավ ընդմիշտ:Նույն օրն իր անձի ծագման հանելուկային և ինքնության կասկածելի լինելու մասին թռուցիկ մի մեկնաբանությամբ, հերթական համարի տակ Մարիան գրանցվեց հոգեբուժարանում: Լուսանցքում գլխավոր բժշկի սեփական ձեռքով գրված էր եզրակացությունը՝ խելագար:Ինչպես և Մարիան էր ենթադրել, այդ երեք ներկայացումներին գնալու համար ամուսինը Հորտա թաղամասի իրենց համեստ բնակարանից կես ժամ ուշ դուրս եկավ: Մոտ երկու տարվա համատեղ կյանքի ընթացքում, որ փոխհամաձայնության եկած ազատ միություն էր, առաջին անգամ էր պատահում, որ կինը ժամանակին չգար, և նա այդ ուշացումը բացատրեց կատաղի անձրևով, որ շաբաթվա վերջում ամայացրել էր ամբողջ շրջանը: Դուրս գալուց առաջ դռան վրա գրություն փակցրեց, թե երեկոյան որ ժամին որտեղ էր լինելու:Առաջին տոնին, որտեղ բոլոր երեխաները կենգուրուի զգեստներ էին հագել, իր ելույթի ժամանակ չներկայացրեց իր ամենահաջողված՝ անտեսանելի ձկնիկների հնարքը, որովհետև առանց իր կնոջ օգնության չէր կարող կատարել այն: Երկրորդ պայմանավորված ներկայացումը իննսուներեք տարեկան, անվասայլակով մի ծեր կնոջ տանն էր, որը պարծենում էր, թե իր վերջին երեսուն տարվա տարեդարձի

տոներից յուրաքանչյուրը նշել է՝ ամեն անգամ տարբեր աճպարարների հետ: Ամուսինն այնքան անհանգիստ էր Մարիայի ուշանալու պատճառով, որ չէր կարողանում կենտրոնանալ նույնիսկ ամենահասարակ հնարքների վրա: Երրորդը Լաս Ռամբլաս փողոցի համերգային սրճարաններից մեկում տրվող ամենօրյա ներկայացումն էր, որտեղ առանց ոգևորության ելույթ ունեցավ մի խումբ ֆրանսիացի տուրիստների համար, որոնք չէին կարողանում հավատալ այն ամենին, ինչ տեսնում էին, որովհետև հրաժարվում էին հավատալ մոգությանը: Ամեն համարից հետո զանգում էր տուն և առանց պատրանքների հույս փայփայում, որ Մարիան կպատասխանի: Վերջին զանգի ժամանակ այլևս չկարողացավ զսպել անհանգստությունը, մտածեց, որ վատ բան է պատահել:Տունդարձի ճանապարհին հրապարակային ելույթների համար հարմարեցրած ֆուրգոնի միջից նկատեց գարնան զարթոնքը Պասեո դե Գրասիայի արմավենիների վրա, և նրան ցնցեց այն չարագույժ միտքը, թե ինչպե՞ս կարող էր քաղաքը գոյություն ունենալ առանց Մարիայի: Վերջին հույսը ևս հօդս ցնդեց, երբ իր գրությունը դեռ դռան վրա փակցված գտավ: Նա այնքան հուզված էր, որ մոռացավ կատվին կեր տալ:Միայն հիմա, այս ամենը գրելիս եմ գլխի ընկնում, որ երբեք չեմ իմացել, թե նրա անունն ինչ էր իրականում, որովհետև Բարսելոնում նրան իր բեմական անունով էինք ճանաչում՝ Մոգ Սատուրնո: Նա տարօրինակ բնավորություն ուներ և անուղղելիորեն անտաշ էր մարդկանց հետ շփվելիս, սակայն տակտի զգացումն ու բարեկրթությունը, որ այնքան պակասում էին նրան, շռայլորեն շնորհված էին Մարիային: Վերջինս էր ձեռքը բռնած նրան առաջնորդում այս հանելուկային հասարակության մեջ, որտեղ ոչ ոքի մտքով երբևէ չէր անցել կեսգիշերից հետո որևէ մեկին զանգ տալ և հարցնել, թե որտեղ է իր կինը: Սատուրնոն հենց այդպես էլ արել էր, երբ նոր էր եկել, բայց չէր ուզում հիշել այդ մասին: Այնպես որ, այդ երեկո նա բավարարվեց միայն Սարագոսա զանգելով, որտեղից մի քնատ տատիկ առանց տագնապի նշույլի պատասխանեց, որ Մարիան ճաշից հետո մեկնել է: Նա միայն մեկ ժամ քնեց լուսաբացին և մի զազրելի երազ տեսավ: Երազում Մարիային տեսավ՝ քրջոտ ու արյան ցայտերով պատված հարսանեկան զգեստով և արթնացավ այն ահասարսուռ համոզվածությամբ, որ նա դարձյալ իրեն մենակ է թողել, այս անգամ՝ ընդմիշտ, առանց իրեն՝ այս մեծ աշխարհում:Վերջին հինգ տարիների ընթացքում Մարիան երեք տարբեր տղամարդկանց էր լքել, այդ թվում՝ նաև Սատուրնոյին: Նրան լքել էր Մեքսիկայում, ծանոթանալուց վեց ամիս անց, այն ժամանակ, երբ Անսուրես նորակառույց թաղամասի վարձու բնակարաններից մեկում խելահեղ սիրո երջանկությունից ուղղակի նվաղում էին նրանք: Մի առավոտ, անպատմելի բուռն գիշեր լուսացնելուց հետո, Մարիան տանը չարթնացավ: Թողել էր ամեն բան, ինչ իրեն էր պատկանում,

նույնիսկ նախկին ամուսնության մատանին և մի նամակ, որտեղ ասում էր, որ ի վիճակի չէր դիմանալու այդ խելացնոր սիրո տառապանքներին: Սատուրնոն կարծել էր, թե նա վերադարձել է նախկին ամուսնու՝ իր համադասարանցու մոտ, որի հետ թաքուն էր ամուսնացել՝ տարիքով փոքր լինելու պատճառով և երկու տարի առանց սիրո ապրելուց հետո լքել հանուն մեկ ուրիշի: Սակայն, ո՜չ. նա վերադարձել էր ծնողների մոտ, և Սատուրնոն գնացել էր այնտեղ, որպեսզի, ինչ գնով ուզում է լինի, գտնի նրան: Առանց պայմանականությունների նրան աղաչեց վերադառնալ, խոստացավ շատ ավելին, քան ընդունակ էր կատարելու, բայց բախվեց մի անդրդվելի վճռականության: ՝Կան կարճատև սերեր, կան՝ երկարատև՛, – ասաց նա և անգթորեն եզրափակեց, – ՝Այս մեկը կարճատև էր՛: Սատուրնոն անձնատուր եղավ նրա անընկճելիությանը: Այնուամենայնիվ, բաժանումից գրեթե մեկ տարի անց, Բոլոր սրբերի տոնի օրերին, մի առավոտ, երբ Սատուրնոն վերադարձավ իր որբացած բնակարանը, նրան քնած գտավ ճաշասենյակի բազմոցին՝ նարնջենու ծաղիկների պսակը գլխին և երկար, նուրբ կտորից կարված կույսի աղջկա հարսանեկան զգեստը հագին:Մարիան պատմեց նրան ճշմարտությունը: Նոր փեսացուն, որ այրի էր, անզավակ, ապահովված և կաթոլիկ եկեղեցում ընդմիշտ ամուսնանալու մտադրություն ուներ, նրան այդպես զգեստավորված թողել էր խորանի մոտ՝ սպասելիս: Իր ծնողներն, այնուամենայնիվ, որոշել էին խնջույքն անել: Նա շարունակել էր խաղը՝ պարել էր, երգել մարիաչիների հետ, մի կերպ դիմացել խնջույքին և գիշերվա կեսին, ուշացած խղճի խայթից սարսափելի ծանր հոգեկան վիճակում հայտնված, եկել էր Սատուրնոյին փնտրելու:Նա տանը չէր, բայց Մարիան գտել էր բանալին միջանցքի ծաղկամանի տակ, որտեղ միշտ պահում էին այն: Այս անգամ էլ Մարիան հանձնվեց նրան առանց որևէ պայմանի: ՝Իսկ հիմա մինչև ե՞րբ՛, – հարցրեց Սատուրնոն: Նա պատասխանեց Վինիցիուս դե Մորաեսի մի բանաստեղծության տողով՝ ՝Սերը հավերժ է, քանի դեռ շարունակվում է՛: Երկու տարի հետո դեռ շարունակում էր հավերժ լինել:Մարիան կարծես հասունացել էր: Նա հրաժարվեց դերասանուհի դառնալու երազանքից և նվիրվեց Սատուրնոյին թե՛ աշխատանքի մեջ և թե՛ անկողնում: Նախորդ տարվա վերջերին նրանք Պերպինյանում մասնակցել էին աճպարարների մի կոնգրեսի և վերադարձին եղել Բարսելոնում, որ նրանց այնքան էր դուր եկել, որ այնտեղ մնացել էին ութ ամիս, և նրանց գործերն այնքան բարեհաջող էին ընթացել, որ բնակարան էին գնել Հորտա կոչվող մի իսկական կատալոնական թաղամասում: Թաղամասն աղմկոտ էր, բնակարանն՝ առանց դռնապանի, բայց այնքան ընդարձակ, որ կբավականացներ հինգ երեխայի: Նրանք երջանիկ էին մինչև այն շաբաթ օրը, երբ Մարիան մեքենա վարձեց և այցելության գնաց Սարագոսայում ապրող իր ազգականներին՝

խոստանալով վերադառնալ երկուշաբթի օրը, երեկոյան ժամը յոթին: Հինգշաբթի օրը լուսաբացին նա դեռ կենդանության նշաններ ցույց չէր տալիս:Հաջորդ երկուշաբթի վարձած ավտոմեքենայի ապահովագրական ընկերությունից զանգահարեցին և Մարիային հարցրին: ՝Ես ոչինչ չգիտեմ՛, – ասաց Սատուրնոն, – Սարագոսայում փնտրեք նրան, – և կախեց լսափողը: Մեկ շաբաթ անց մի ոստիկանական տեսուչ եկավ և հայտնեց, թե Կադիսին մոտ մի ճանապարհի վրա՝ ինը հարյուր կիլոմետր հեռու անտեղից, որտեղ Մարիան թողել էր մեքենան, գտել են այն թալանված, զուտ կմախքը: Նա ուզում էր իմանալ՝ արդյո՞ք Մարիան ավելի շատ մանրամասներ գիտեր կողոպուտի մասին: Այդ ժամանակ Սատուրնոն կատվին էր կերակրում և հազիվ նրա կողմը շրջվելով, առանց այլևայլության ասաց, որ ժամանակ չկորցնեն, քանի որ իր կինը փախել է տնից, և ինքը չգիտի, թե ում հետ և ուր: Նա այնքան համոզված էր, որ տեսուչն անհարմար զգաց և ներողություն խնդրեց իր տված հարցերի համար: Գործը փակված հայտարարվեց:Մտավախությունը, որ Մարիան նորից կարող էր հեռանալ իրենից, Սատուրնոյին համակել էր Զատկի տոնին, Կադակեսում, ուր Ռոզա Ռեգասը առագաստանավով զբոսնելու էր հրավիրել նրանց: Մարիտիմում՝ էինք, ֆրանկիզմի մայրամուտի ժամանակների gauche divineի մարդաշատ և գարշելի մի բարում, այն երկաթե աթոռներով երկաթե սեղաններից մեկի շուրջը, որտեղ վեց հոգով հազիվ էինք տեղավորվում, բայց քսան հոգով էինք նստում: Ծխախոտի երկրորդ տուփի վերջը տալուց հետո Մարիայի մոտ լուցկի չէր մնացել: Հռոմեական բրոնզե ապարանջանով նիհար ու մազմզոտ մի ձեռք սեղանի խառնաշփոթի միջով ճանապարհ բացեց և կրակ մատուցեց նրան: Նա շնորհակալություն հայտնեց, չտեսնելով թե ում, սակայն Մոգ Սատուրնոն տեսավ նրան: Անբեղ-անմորուք, ոսկրոտ, մեռելային գունատ դեմքով, ձիու պոչի նմանվող շատ սև, մինչև գոտկատեղը հասնող պոչով մի պատանի էր: Բարի ապակիները հազիվ էին դիմանում գարնանային քամու փոթորկին, իսկ նա քաթանե քնաշորի նման մի բան էր հագել, ոտքերին էլ՝ գեղջկական տրեխներ:Մինչև աշնան վերջն այլևս չտեսան նրան: Իսկ երբ տեսան Բարսելոնի ծովային ուտեստների խորտկարաններից մեկում, նա դարձյալ հասարակ քաթանե կոստյումով էր, իսկ ձիու պոչի փոխարեն՝ երկար հյուսով: Նա երկուսին էլ ողջունեց ինչպես վաղեմի բարեկամների, բայց նրա՝ Մարիային համբուրելու և վերջինիս՝ նրան պատասխանելու ձևը կասկած զցեց Սատուրնոյի սրտում, որ նրանք գաղտնի հանդիպելիս են եղել: Մի քանի օր անց պատահաբար տնային հեռախոսագրքի մեջ Մարիայի ձեռքով գրված նոր անուն ու հեռախոսահամար գտավ, և խանդից փայլատակած դաժան մի միտք հուշեց նրան, թե ումն են դրանք: Իսկ վերջակետը դրեց այդ դուրսպրծուկի հասարակական համառոտ բնութագիրը. քսան տարեկան, հարուստ ծնողների միակ որդի, նորաձևության ցուցափեղկերի ձևավորող,

հավանական բիսեքսուալի համբավի տեր և ամուսնացած կանանց վարձու մխիթարչի միանգամայն հիմնավորված վարկ: Սակայն Սատուրնոն կարողացավ ինքն իրեն զսպել մինչև այն երեկո, երբ Մարիան տուն չվերադարձավ: Հետո սկսեց ամեն օր զանգահարել նրան, սկզբում՝ երկու-երեք ժամը մեկ, առավոտվա վեցից սկսած մինչև հաջորդ լուսաբաց, այնուհետև ամեն անգամ, երբ ձեռքի տակ հեռախոս էր գտնում: Այն փաստից, որ ոչ ոք չէր վերցնում լսափողը, է՛լ ավելի էր մեծանում նրա տառապանքը:Չորրորդ օրը նրան անդալուզցի մի կին պատասխանեց, որը միայն տունը մաքրելու էր եկել: Պարոնը գնացել է՛, – խենթացնելու համար բավականաչափ անորոշ ասաց կինը: Սատուրնոն չդիմացավ գայթակղությանը և հարցրեց, թե պատահաբար այնտեղ չէ՞ օրիորդ Մարիան:– Այստեղ ո՛չ մի Մարիա էլ չի ապրում, – պատասխանեց կինը, – Պարոնն ամուրի է:– Դե՛, ես դա գիտեմ: Չի ապրում, բայց երբեմն գալիս է: Թե՞ չէ:Կինը բորբոքվեց.– Էդ ո՞ր մի ցնդածն է խոսում էդտեղ:Սատուրնոն կախեց լսափողը: Կնոջ բացասական պատասխանը նրան ավելին թվաց, քան հաստատումն այն բանի, ինչը նրա համար արդեն ոչ թե կասկած էր, այլ այրող համոզվածություն: Նա կորցրեց ինքնատիրապետումը: Հաջորդ օրերին ըստ այբբենական կարգի՝ զանգահարեց Բարսելոնի բոլոր ծանոթներին: Ոչ ոք նրան կասկածի առիթ չտվեց, բայց յուրաքանչյուր զանգի հետ խորացավ նրա դժբախտությունը, որովհետև նրա զառանցագին խանդն արդեն հայտնի էր gauche divine-ի կեսգիշերային մոլի այցելուներին, որոնք ինչ ծաղրանքով ասես, որ չէին պատասխանում նրան, ինչից նա ավելի շատ էր տանջվում: Եվ միայն այդժամ նա հասկացավ, թե որքա՛ն միայնակ է ինքն այդ գեղեցիկ, լուսնոտ ու անթափանց քաղաքում, որտեղ այլևս երբեք երջանիկ չէր լինելու: Լուսաբացին, երբ կատվին արդեն կեր էր տվել, ճնշեց զգացմունքները, որպեսզի չմեռնի և որոշում ընդունեց՝ մոռանալ Մարիային:Երկու ամիս հետո էլ դեռ Մարիան չէր հարմարվել բուժարանի կյանքին: Նա գոյություն էր պահպանում, հազիվ ճմճմելով բանտային օրաբաժինը, որ տրվում էր կոպիտ փայտե սեղանին շղթաներով ամրացված սպասքով, հայացքը սևեռած գեներալ Ֆրանցիսկո Ֆրանկոյի վիմատիպ դիմանկարին, որ իշխում էր միջնադարյան մռայլ ճաշասրահի վրա: Սկզբում նա ընդդիմանում էր կրոնին նվիրված ժամերին՝ իրենց քարացած առավոտյան և երեկոյան տխմար ժամերգություններով և օրհներգություններով, ինչպես նաև եկեղեցական այլ գործերին, որոնց հատկացվում էր ժամանակի մեծ մասը: Նա հրաժարվում էր բակում գնդակ խաղալ, աշխատել արհեստական ծաղիկների արհեստանոցում, ինչով որ ազատազրկված կանանց մի խումբ մոլեգին ջանասիրությամբ էր զբաղվում: Սակայն երրորդ շաբաթվանից սկսած՝ նա կամաց-կամաց սկսեց ներգրավվել մենաստանի կյանքում: Վերջին հաշվով, բժիշկների ասելով, բոլորն էլ այդպես էին սկսում և, վաղ

թե ուշ, ի վերջո միանում հանրությանը:Ծխախոտի պակասը, որ առաջին օրերին լուծվում էր մի հսկիչ կնոջ միջոցով, որը ոսկու գնով էր վաճառում դրանք, կրկին սկսեց տանջել Մարիային, երբ վերջացավ նրա մոտ եղած փոքր գումարը: Հետո մխիթարվեց լրագրի թղթի մեջ փաթաթած ծխախոտով, որ որոշ ազատազուրկ կանայք պատրաստում էին աղբի միջից հավաքած սիգարետի քնթուկներից, որովհետև ծխելու մարմաջն այնքան ուժգին էր դարձել, որքան զանգելունը: Չնչին գրոշները, որ ավելի ուշ նա վաստակում էր արհեստական ծաղիկներ պատրաստելով, շատ վաղանցիկ սփոփանք բերեցին նրան:Ամենածանրը գիշերվա միայնությունն էր: Շատ կանայք իր նման արթուն էին մնում կիսախավարի մեջ, բայց չէին համարձակվում որևէ բան անել, որովհետև շղթայով ու կողպեքով փակված դռան ետևում գիշերային հսկիչը նույնպես արթուն էր: Այնուամենայնիվ, մի գիշեր, ծանր մտքերից վհատված, Մարիան այնպիսի ձայնով, որ լսելի լինի ննջարանի հարևանուհուն, հարցրեց.– Որտե՞ղ ենք մենք:Հարևանուհու թավ և հստակ ձայնը պատասխանեց.– Տարտարոսում:– Ասում են, թե սա մավրերի հողն է, – ասաց մի այլ հեռավոր ձայն, որը հնչեց ննջասենյակի ծայրից: – Եվ պետք է, որ այդպես էլ լինի, որովհետև ամռանը, երբ լուսին է լինում, լսվում է, թե ինչպես են շները հաչում ծովի վրա:Լսվեց դռան օղակների վրա շարժվող շղթայի ձայնը, որ առագաստանավի խարիսխի հանած ձայնի էր նման, և դուռը բացվեց: Անքուն հսկիչը՝ միակ արարածը, որ կենդանի էր թվում վայրկենապես տիրած լռության մեջ, սկսեց անցուդարձ անել ննջասենյակի մի ծայրից մյուսը: Մարիայի լեղին ջուր կտրեց, և միայն ինքը գիտեր, թե ինչու:Հենց առաջին շաբաթվանից սկսած՝ գիշերային հսկիչն, առանց այս ու այնկողմ ընկնելու, առաջարկել էր նրան իր հետ քնել հսկիչների խցիկում: Սկսել էր կոնկրետ գործնական տոնով՝ սիրո դիմաց՝ ծխախոտ, շոկոլադ, ինչ որ լինի ձեռքի տակ: Ամեն բան կունենաս՛, – դողահար ասել էր նա, – Թագուհու պես կապրես՛: Մարիայի մերժումից հետո պահապանը փոխել էր մոտեցման մեթոդը. սիրային գրություններ էր թողնում նրա բարձի տակ, խալաթի գրպաններում և ամենաանհավանական տեղերում: Դրանք հարկադրանքով լի սրտաճմլիկ գրություններ էին, որոնցից քարը կճաքեր: Այդ գիշեր, երբ ննջասենյակի միջադեպը պատահեց, արդեն մեկ ամսից ավելի էր, ինչ նա համակերպվել էր իր պարտության հետ:Երբ հսկիչը համոզվեց, որ բոլոր կանայք քնած են, մոտեցավ Մարիայի մահճակալին և նրա ականջին ինչ տեսակ անպարկեշտ փաղաքուշ բան ասես, որ չշշնջաց՝ համբուրելով նրա դեմքը, սարսափից պրկված պարանոցը, փայտացած թևերն ու անկյանք ոտքերը: Ի վերջո, կարծելով, թե գուցե Մարիայի ընդարմությունը ոչ թե վախից է, այլ՝ հաճույքից, համարձակվեց ավելի հեռուն գնալ: Այդ ժամանակ Մարիան ձեռքի հակառակ երեսով այնպիսի մի հարված հասցրեց, որը նրան հարևան մահճակալին նետեց: Գազազած

հսկիչը հայտնվեց աղաղակող խելագար կանանց սարքած իրարանցման մեջ։– Շան քա՛ծ, – ճչաց նա, – մենք միասին կփտենք այս խոզաբնում մինչև դու խելքդ չթռցնես ինձ համար։Ամառը եկավ անսպասելի՝ հունիսի առաջին կիրակի օրը, և կարիք եղավ արտակարգ միջոցներ ձեռնարկել, որովհետև պատարագի ժամանակ շոգից խեղդվող կանայք սկսում էին հանել իրենց բրդյա փարաջաները։ Մարիան ներկա եղավ մի ծիծաղաշարժ տեսարանի, որը զվարճացրեց նրան. հսկիչներն ընկել էին մերկանդամ հոգեկան հիվանդ կանանց ետևից, որոնք կույր հավերի նման փախեփախ էին անում բակով մեկ։ Իրարանցման մեջ նա փորձեց պաշտպանվել խառը տեղացող հարվածներից, և ինքն էլ չիմացավ, թե ինչպես մենակ հայտնվեց մի լքված աշխատասենյակում, որտեղ հեռախոսն առանց դադարի զանգում էր աղերսական ձայնով։ Մարիան առանց մտածելու վերցրեց լսափողը և մի հեռավոր և զվարթ ձայն լսեց, որ զվարճանում էր՝ ձևացնելով, թե ժամը հայտարարող հեռախոսային ծառայությունն է.– Ժամը քառասունհինգն անց է ինսուներկու րոպե հարյուր յոթ վայրկյան։– Ապուշի մե՛կը, – նետեց Մարիան։Նա ուրախ կախեց լսափողը և արդեն հեռանում էր, երբ հանկարծ գլխի ընկավ, որ ձեռքից անկրկնելի հնարավորություն էր բաց թողնում։ Նա այնքան հապշտապ և լարված հավաքեց վեց թվերը, որ վստահ չէր, թե արդյո՞ք իր տան համարն էր հավաքել։ Սիրտը տեղից դուրս գալով սպասեց, ականջ դրեց տենչալի և տխուր տոնով հարազատ ազդանշաններին՝ մեկ, երկու, երեք և ի վերջո, լսեց իր կյանքի ուղեկից տղամարդու ձայնը, որն այն տանն էր, որտեղ ինքը չկար։– Լսում եմ։Նա սպասեց մինչև անհետանար կոկորդում հավաքված արցունքների գունդը։– Փիսի՛կս, կյա՛նքս, – հառաչեց նա։Արցունքները հաղթեցին նրան։ Գծի մյուս ծայրում ապշահար լռեցություն տիրեց մի պահ, հետո խանդից բորբոքված ձայնը շպրտեց՝ պոռնի՛կ, և կտրուկ կախեց լսափողը։Այդ գիշեր կատաղության նոպայի մեջ Մարիան ճաշասրահի պատից պոկեց գեներալիսիմուսի վիմատիպ դիմանկարը, ամբողջ ուժով նետեց այն դեպի այգին նայող պատուհանը և արնաշաղախ փլվեց հատակին։ Բայց նրա կատաղությունն այնքան մեծ էր, որ դեռ հերիքում էր հարվածներով ընդդիմանալու հսկիչներին, որոնք ապարդյուն փորձում էին զսպել նրան, մինչև տեսավ դռների արանքում ցցված Հերկուլինային, որ ձեռքերը կրծքին խաչած, իրեն էր նայում։ Նա անձնատուր եղավ։ Բայց և այնպես, նրան քարշ տվին մինչև կատաղի հոգեկանների պալատը, շշմեցրին սառը ջրաշիթով և ոտքերից բևեկնայուղ ներարկեցին։Բևեկնայուղից առաջացած բորբոքման հետևանքով քայլելու կարողությունից զրկված՝ Մարիան հասկացավ, որ աշխարհում չկա մի բան, որ ինքն ընդունակ չլինի անելու՝ հանուն այդ դժոխքից դուրս պրծնելու։ Եվ հաջորդ շաբաթ, երբ արդեն վերադարձել էր ընդհանուր ննջարան, վեր կացավ և ոտնաթաթերի վրա գնաց դեպի գիշերային հսկիչի խցիկն ու թակեց դուռը։Գինը, որ Մարիան նախապես

պահանջեց, այն էր, որ հսկիչն իր գրությունը տաներ ամուսնուն: Վերջինս համաձայնեց մի պայմանով, որ իրենց կապն առմիշտ բացարձակապես գաղտնի մնա, և ձեռքով անողոք հաշվեհարդարի մի նշան ցույց տվեց.– Եթե երբևէ իմացվի, դու մեռած ես:Այսպես, հաջորդ շաբաթ օրը Մարիայի վերադարձը տոնելու առթիվ նախապատրաստած կրկեսի շրջիկ ֆուրգոնով Մոգ Սատուրնոն գնաց հոգեբուժարան: Գլխավոր բժիշկն անձամբ դիմավորեց նրան իր՝ ռազմանավի նման մաքուր ու կոկիկ առանձնասենյակում և շատ տպավորիչ զեկուցեց կնոջ վիճակի մասին. ոչ ոք չգիտեր, թե որտեղից, ինչպես և երբ էր նա եկել, որովհետև նրա ընդունման առաջին տվյալն իր կողմից թելադրված պաշտոնական գրանցումն է եղել այն օրը, երբ տեսակցություն է ունեցել նրա հետ: Նույն օրը սկսված ուսումնասիրությունները ոչ մի արդյունքի չեն բերել: Այնուամենայնիվ, տնօրենին ամենաշատը հետաքրքրում էր այն, թե Սատուրնոն որտեղից է իմացել կնոջ գտնվելու վայրը: Սատուրնոն խնայեց հսկիչ կնոջը:– Ինձ ավտոմեքենայի ապահովագրական ընկերությունն է հաղորդել, – ասաց նա:Տնօրենը բավարարված՝ հավանության նշան արեց. Չգիտեմ, թե այդ ինչ են անում ապահովագրական ընկերությունները, որ ամեն բան իմանում են: Նա մի հայացք գցեց ճգնավորի իր գրասեղանին դրված անձնական գործին և եզրափակեց.– Միակ ճշմարտությունն այն է, որ նրա վիճակը շատ ծանր է:Նա պատրաստ էր Սատուրնոյին այցելության թույլտվություն տալ՝ որոշ անհրաժեշտ նախազգուշական միջոցներ կիրառելով. եթե նա հանուն իր կնոջ բարօրության խոստանար հավատարիմ մնալ իր թելադրած վարքագծին, հատկապես կնոջ հետ շփվելիս, որպեսզի նա նորից չընկներ զայրույթի պոռթկման նոպայի մեջ, որ ամեն անգամ ավելի ու ավելի հաճախակի և վտանգավոր էր դառնում:– Շատ տարօրինակ է, – ասաց Սատուրնոն, – նա միշտ էլ հախուռն բնավորություն է ունեցել, բայց նաև՝ մեծ ինքնատիրապետում:Բժիշկը շատ բան իմացող մարդուն հատուկ ձեռքի մի շարժում արեց և ասաց. Վարքագծեր կան, որ երկար տարիներ գաղտնի են մնում և մի օր պոռթկում են: Այդուհանդերձ, բախտավորություն է, որ նա այստեղ է ընկել, որովհետև մենք այնպիսի դեպքերի մասնագետներ ենք, որ ուժեղ ձեռք են պահանջում: Վերջում նախազգուշացրեց Մարիայի՝ հեռախոսի հետ կապված տարօրինակ սևեռուն մտքի մասին:– Հետևեք նրան ընթացքում, – ասաց բժիշկը:– Հանգիստ եղեք, բժիշկ, – ուրախ պատասխանեց Սատուրնոն, – դա իմ մասնագիտությունն է:Տեսակցությունների սրահը, որ բանտի և խոստովանախցի խառնուրդ էր հիշեցնում, նախկինում մենաստանի ընդունարանն էր եղել: Սատուրնոյի մուտքն այնպիսի ցնծություն չառաջացրեց, ինչպիսին նրանք երկուսն էլ կարող էին սպասել: Մարիան կանգնած էր սրահի կենտրոնում, սեղանի կողքին, որի մոտ երկու աթոռ կար, իսկ վրան՝ դատարկ մի ծաղկաման: Նրա հագած մորեգույն

ողորմելի վերնազգեստից և կեղտոտ կոշիկներից, որ գթասիրաբար տվել էին նրան, պարզ երևում էր, որ նա պատրաստ էր հեռանալ այդտեղից: Հերկուլինան, ձեռքերը կրծքին խաչած, կանգնած էր մի անկյունում, որտեղից հազիվ էր երևում: Մարիան տեղից չշարժվեց, երբ ամուսինը ներս մտավ, և ոչ էլ որևէ թրթիռ արտահայտվեց նրա դեմքին, որի վրա դեռ տեղ-տեղ մնացել էին ապակու հասցրած վնասվածքները: Նրանք սովորականի պես ողջագուրվեցին:– Ինչպե՞ս ես քեզ զգում, – հարցրեց Սատուրնոն:– Երջանիկ եմ, որ վերջապես եկել ես, փիսիկս, – պատասխանեց Մարիան, – սա ուղղակի մահ էր:Նրանք ժամանակ չունեցան նստելու: Արցունքներից խեղդվելով՝ Մարիան պատմեց բանտի թշվառությունների, հսկիչների բարբարոսությունների, մատուցվող շան լափի, անվերջանալի գիշերների մասին, երբ ահուսարսափից մարդ չի կարողանում աչք փակել:– Արդեն չգիտեմ, թե քանի օր, քանի ամիս կամ քանի տարի եմ այստեղ, բայց գիտեմ, որ յուրաքանչյուր օրը մյուսից ավելի վատն է եղել, – ծանր հառաչելով ասաց նա: – Ինձ թվում է, որ ես երբեք այլևս նույնը չեմ լինելու:– Արդեն վերջացավ այդ ամենը, – ասաց Սատուրնոն՝ մատների ծայրով շոյելով նրա դեմքի թարմ սպիները: – Ես ամեն շաբաթ կգամ, գուցե ավելի հաճախ, եթե տնօրենը թույլ տա: Կտեսնես, որ ամեն ինչ շատ լավ կլինի:Մարիան նրա աչքերին գամեց իր ահաբեկված հայացքը: Սատուրնոն փորձեց օգտագործել իր սալոնային հմտությունները: Այն միամիտ տոնով, որով մեծ ստեր են հորինում, նրան ներկայացրեց բժշկի կանխատեսումների մեղմացրած տարբերակը:– Ընդհանուր առմամբ, լիարժեք ապաքինվելու համար դեռ մի քանի օր էլ է մնացել քեզ, – եզրափակեց նա:Մարիան հասկացավ ճշմարտությունը:– Ի սե՛ր Աստծո, փիսի՛կս, – ապշահար ասաց նա, – միայն չասես, որ դու էլ ես կարծում, թե ես ցնորվել եմ:– Ինչպե՛ս կարող է մտքովդ անցնել, – պատասխանեց Սատուրնոն՝ փորձելով ծիծաղել: – Բանն այն է, որ բոլորիս համար էլ շատ ավելի լավ կլինի, եթե մի որոշ ժամանակ էլ այստեղ մնաս, անշուշտ, ավելի լավ պայմաններում:– Բայց չէ՞ որ ես քեզ արդեն ասացի, որ ես միայն զանգահարելու եմ եկել, – ասաց Մարիան:Սատուրնոն չիմացավ, թե ինչ պետք է անի նրա սարսափազդու մոլեգնության պահին: Նայեց Հերկուլինային: Վերջինս բռնեց նրա հայացքը և, իր ձեռքի ժամացույցը ցույց տալով, հասկացրեց, որ տեսակցության ժամանակը սպառված է: Մարիան նկատեց նշանը, ետ նայեց, տեսավ լարված, հարձակման սպառնալիքով պատրաստ կանգնած Հերկուլինային և վայնասունով կառչեց ամուսնու վզից, ինչպես իսկական խենթ: Սատուրնոն հեռացրեց նրան իրենից այնքան սիրալիր, որքան կարող էր և թողեց նրան Հերկուլինայի կամքին, որը թիկունքից հարձակվեց նրա վրա: Որևէ դիմադրություն ցույց տալու ժամանակ չտալով՝ ձախ ձեռքով բռնեց նրան, մյուս երկաթյա բազուկն անցկացրեց վզին և՝Հեռացե՛ք՝ գոռաց Մոգ Սատուրնոյին:Սատուրնոն զարհուրած

փախավ:Այնուամենայնիվ, հաջորդ շաբաթ օրը, երբ արդեն ապաքինվել էր տեսակցության ահուսարսափից, նա կրկին գնաց հոգեբուժարան: Կատուն, որին ճիշտ իր նման էր հագցրել, հետն էր՝ կարմիր և դեղին տրիկո, ցիլինդր, մեկուկես պտույտ վրան փաթաթած թիկնոց, որ թվում էր, թե սավառնում է օդում: Շրջիկ ֆուրգոնով մտավ մինչև մենաստանի բակը և այնտեղ համարյա երեք ժամանոց հրաշալի մի ներկայացում տվեց, որն ազատազրկված կանայք հիացմունքով դիտեցին պատշգամբներից՝ ընդմիջելով այն անհարկի ճիչերով և անտեղի ծափահարություններով: Բոլորն այնտեղ էին, բացի Մարիայից: Նա ոչ միայն մերժել էր ընդունել ամուսնուն, այլ նաև՝ դիտել նրան պատշգամբից: Սատուրնոն մահացու վիրավորված զգաց իրեն:– Դա շատ տիպիկ վարք է, – սփոփում էր նրան տնօրենը, – կանցնի:Սակայն այդպես էլ չանցավ: Բազմիցս Մարիային կրկին տեսնելու ջանքեր թափելուց հետո, Սատուրնոն անհնարին ամեն բան արեց, որպեսզի նա գոնե նամակ ընդունի իրենից, սակայն՝ ապարդյուն: Չորս անգամ նա ետ վերադարձրեց նամակը՝ առանց բացելու և առանց մեկնաբանությունների: Սատուրնոն տեղի տվեց, բայց շարունակեց բուժարանի մուտքի դռան մոտ ծխախոտ թողնել, նույնիսկ չիմանալով, արդյո՞ք հասնում են դրանք Մարիային, թե ոչ, մինչև իրականությունը ծնկի բերեց նրան:Երբեք այլևս նրա մասին ոչինչ չիմացանք, բացի այն, որ նորից էր ամուսնացել և վերադարձել իր երկիրը: Բարսելոնից մեկնելուց առաջ քաղցից կիսամեռ կատվին թողել էր պատահական սիրուհիներից մեկի մոտ, որը նաև նրան խոստացել էր շարունակել ծխախոտ տանել Մարիայի համար: Բայց նա նույնպես անհետացել էր: Ռոզա Ռեգասը հիշում էր, որ մի երկու տարի առաջ նրան տեսել էր Կորտե Ինգլեսում՝ խուզած գլխով, արևելյան ինչ-որ մի սեկտային հատուկ նարնջագույն փարաջայով, հղի, անասելի մեծ փորով: Նա Ռոզային պատմել էր, որ երբ կարողացել է, միշտ էլ ծխախոտ է տարել և որոշ չնախատեսված, հույժ շտապ հարցեր լուծել Մարիայի համար մինչև այն օրը, երբ բուժարանի փլատակներն է գտել միայն, ավերված, ինչպես այն դժնդակ ժամանակների վատ հիշողությունը: Երբ վերջին անգամ տեսել է Մարիային, իրեն թվացել է, որ նա պայծառ միտք ունի, փոքր-ինչ գիրացել է և գոհ է մենաստանի խաղաղությունից: Այդ օրը նաև կատվին էր տարել հետը, որովհետև արդեն վերջացել էր այն փողը, որ Սատուրնոն թողել էր նրան կերակրելու համար: